Առեր ի հավայն ելեր, պարծեցեալ թէ՝ Որս եմ արել:
Արծիւն այլ է զան լըսել, լօք նըտսր ու շատ մի լացեր.
Հաւերդ ալ իրար եկել ’ւ արծըւին ի տես գընացի:
«Արծի՛ւ, ա՛մ, արի՛ թըռի՛, վազի՛, ա՛յ մամում չէ եկել (?):

Ժ Բ.

Աւա՛ղ, թէ մեռնիլ պիտէր եւ մըտնուլ ի հող ’ւ ի զընտան,
Փորեն լան ու մեծ տապան, չիթողուն մէկիկ մ’պատուհան:
Օձերն ի ձագերն ասեն թէ՝ Երթանք նորա երեւան.
Առաջ ըզլեզուն ուտենք որ ասել շատ մարդու բուխտան,
Ապա թէ զմարմինն ուտենք որ ելնէ ոսկորն երեւան:

Ժ Գ.

Արեգակն ու լուսնիկան խըմեցին ու եղան մախմուր.
Առաւօտ ի վրայ երեկ, լօք ’ւ եղան երկու թուր ’ւ ի թուր.
Աստղերդ ալ առաջ եկին, լուսնեկին ասին՝ Դուն ի լո՛ւր,
Ատոր արեգակ ասեն որ ցաթ է ի սար ՛ւ ի բըլուր:

Ժ Դ.

Այս ասընւորիս վըրայ թող մանկան գըլուխըն ապրի.
Շատ չար ու բարի, աղբա՛ր, թող մանկան գըլխէն անցընի.
Չարին համբերել պիտի ինչ որ գայ բարին հասանի.
Ով խուսան ի սիրտն առնու, քանց իր օրն յառաջ մեռանի:
Խուսան շատով ցաւ կ’առնէ, ի ցաւէն մարդըն մեռանի.
Սիրտըն զինչ հասրաթ ունի, ամենէն մահրում կու լինի:

Ժ Ե.

Ով ողորմութիւն անէ, ի յանդէնըն մուլք կու շինէ.
Մըշակըն Քրիստոս կուտայ, ան պահըն մուլքին կատարէ,
Ծառ մի դըրախտէն կ’առնու ան մուլքին մէջըն կու տընկէ,
Ջուր անմահութեան կ’առնու, ան ծառին տակէն կու բըխէ:

ԵՐՐՈՐԴ ՏԱՂԱՇԱՐՔ

Ա.

Մահալօքս ի վար կուգ’ի, նա տեսայ չոր գանկ մի պառկած.
Ոտօքըս թափալ տըւի, նա երեսս ի վայր ծիծաղաց.
Դարձաւ պատասխան երետ՝ «Ի՞նչ կ’անես, կըտրի՛ճ շըփացած.